Արձանագրություն N 3

ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան

06.08.2018թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին.
Հանձնաժողովի նախագահ՝ Պ.Աղաբաբյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ալեքյան, Մ. Ալլահվերդյան, Կ. Մանուչարյան, Ռ. Ղուկասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Կարապետյան

1.Տվյալներ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց.

- Նիստը բացված:

- Գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝
Չափաբաժին 1՝ գրավոր թարգմանություններ 750000 (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:
Չափաբաժին 2՝ բանավոր թարգմանություններ 1 320 000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

2. Տեղեկություն «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի վայրի, օրվա, ժամի մասին

2.1 «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2018 թվականի օգոստոսի 3-ին ժամը 10:00-ին, ք. Երևան Կ. Ուլնեցու 31 հասցեում, <armeps> էլեկտրոնային համակարգով:

3.Տվյալներ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ	mail@agtranslate.ru
2	«Կրթարան Սոնա» ՍՊԸ	krtaransona@gmail.com
3	«Վի Գրուպ» ՍՊԸ	V_group.yerevan@yahoo.com

4. Տվյալներ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին

4.1. «Կրթարան Սոնա» ՍՊ, «Վի Գրուպ» ՍՊ ընկերությունների և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ-ի ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ <armeps> էլեկտրոնային համակարգով:

5. Տվյալներ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

5.1. «Վի Գրուպ» ՍՊԸ-ի և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են: «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի հայտերում տեխնիկական չափորոշիչներ բաժնում կցված է եղել հավելված 2 փաստաթուղթը, հավելված 3-ի՝ «Հայտարարություն որակավորման չափանիշներին բավարարելու մասին», փոխարեն: Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով՝ համաձայն ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41 կետի և մասնակցին տեղեկացնել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

6. Տվյալներ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

6.1. «Կրթարան Սոնա» ՍՊ, «Վի Գրուպ» ՍՊ ընկերությունների և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ-ի կողմից ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

6.2 . «Կրթարան Սոնա» ՍՊ, «Վի Գրուպ» ՍՊ ընկերությունների և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան: Ծառայությունների պատշաճ մատուցումն ապահովելու համար, հրավերի հավելված 5-ի հավելված 1-ով՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ», պահանջվում էր ներկայացնել յուրաքանչյուր չափաբաժնի գինը ըստ բաղադրիչների (լեզուների): «Կրթարան Սոնա» ՍՊ ընկերության և «Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ-ի ներկայացրած հայտերում բացակայում էր պահանջվող տեղեկատվությունը: Հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և մասնակիցներին տեղեկացնել մինչև կասեցման ժամկետի ավարտը ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Նշված ժամանակահատվածում պահանջվող տեղեկատվությունը ներկայացվել է:

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին

Մասնակցի անվանումը	Գնման ենթակա ծառայության անվանումը		
	Չափման միավորը	Գրավոր թարգմանության ծառայություններ Չափաբաժին 1	Բանավոր թարգմանության ծառայություններ Չափաբաժին 2
		Գնի /առաջարկ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ	Գնի /առաջարկ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ
«Գևորգ Սիմոնյան Ջիվանի» ԱՁ	դրամ	53000	-
«Կրթարան Սոնա» ՍՊԸ	դրամ	44900	95500
«Վի Գրուպ» ՍՊԸ	դրամ	77100	77100

8. Տվյալներ՝ «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ

8.1 Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել՝ Չափաբաժին 1-ի և 2-ի համար «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ն:

9. «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

9.1 «ՄԾ-ԳՀԾՁԲ-18/16» ծածկագրով էլեկտրոնային ձևով ընթացակարգի գնահատման արդյունքների հաստատման նիստը և ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ որոշումը կայացնել կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ –0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Պ. Աղաբաբյան

Անդամներ՝ _____ Ա. Ալեքյան

_____ Մ. Ալլահվերդյան

_____ Կ. Մանուչարյան

_____ Ռ. Ղուկասյան

Քարտուղար՝ _____ Ս. Կարապետյան